ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-20/17

ք. Երևան

19.02.2020թ.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Տիգրան Գալստյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արմատ Գաստրո Գրուպ» ՍՊԸ -ի, ի դեմս Տնօրեն Արեգ Գևորգյանի որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պաշտոնական պատվիրակությունների անդամների համար հյուրասիրության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 2000000 (երկու միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագրի ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 20 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱԺ աշխատակազմ	<< ԱՐՄԱՏ ԳԱՍՏՐՈ ԳՐՈՒՊ >> ՍՊԸ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19	Ք. Երևան, Թումանյան Փ.23 շ. 1-ին տ.
ՀՎՀՀ 00008519	Ամերիա բանկ ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 1570055606590100
Հ/Հ 900011020089	<< ԱՐՄԱՏ ԳԱՍՏՐՈ ԳՐՈՒՊ >> ՍՊԸ-ի
ՀՀ ԱԺ աշխատակազմի	Տնօրեն՝ Արեգ Գևորգյան
ղեկավար – գլխավոր քարտուղար՝	
Տիգրան Գալստյան	
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«19» 02 2020թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-20/17 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հացեն	Ժամկետը
1	79111200/1	Պատվիրակության անդամների համար կազմակերպվելիք պաշտոնական հյուրասիրությունը պետք է ներառի 1. Սառը խորտիկներ, 2. Աղցաններ, 3. Տաք խորտիկներ, 4. Ապուրներ, 5. Տաք ուտեստներ, 6. Խավարտներ, 7. Ալկոհոլային խմիչքներ, 8. Կոկտեյլներ, 9. Տաք ըմպելիքներ, 10. Զովացուցիչ ըմպելիքներ (նաև բնական), 11. Աղանդեր (խմորեղեն), 12. Միրգ: ***Մասնակիցը գնային առաջարկին կից պետք է ներկայացնի իր կողմից հաստատված ընդհանուր մենյուն՝ ըստ առավելագույն գների:*** Վերջնական պատվերը համաձայնեցվում է պատվիրատուի հետ:	դրամ	1539850	1	Թումանյան 23/1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.12.2020թ.

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար – գլխավոր քարտուղար՝
Տիգրան Գալստյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<< ԱՐՄԱՏ ԳԱՍՏՐՈ ԳՐՈՒՊ >> ՍՊԸ
Ք. Երևան, Թումանյան Փ. 23 շ. 1-ին տ.
ՀՎՀՀ-01287516
Ամերիա բանկ ՓԲԸ
Հ/Հ 1570055606590100
Տնօրեն՝ Արեգ Գևորգյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
«19» 02 2020թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-20/17 ծածկագրով պայմանագրի

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵՆՅՈՒՆ՝ ԸՍՏ ԳՆԵՐԻ
«ԱՐՄԱՏ ԳԱՍՏՐՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ - ՔԱՄԱՆՉԱ ռեստորան

ՀՀ դրամ

Սառը Նախուտեստներ

Ճաշատեսակներ	Քանակը	Գինը
Բանջարեղենի տեսականի	1 Բաժ	2100
Կանաչու տեսականի	1 Բաժ	2000
Կիտրոն ձիթապտուղ	1 Բաժ	1300
Հայկական պահածոների տեսականի	1 Բաժ	1900
Հայկական պանրի տեսականի	1 Բաժ	2100
Հումուս	1 Բաժ	1000
Չկան տեսականի	1 Բաժ	7900
Ղավուրմա	1 Բաժ	3900
Պխալի	1 Բաժ	1600
Ռեժան	1 Բաժ	1000
Սմբուկով ռոլլեր	1 Բաժ	1500
Տնական թթվի տեսականի	1 Բաժ	1400
Տնական մսի տեսականի	1 Բաժ	3900
Քամած մածուն	1 Բաժ	1000
Թոնրի հաց և լավաշ	1 Բաժ	400

Տաք Նախուտեստներ

Ճաշատեսակներ	Քանակը	Գինը
Իշլի քյուֆթա	1 Բաժ	2000
Սնկով նրբաբլիթ	1 Բաժ	1600
Տավարի մսով նրբաբլիթ	1 Բաժ	1700

Աղցաններ

Ճաշատեսակներ	Քանակը	Գինը
Աղցան անանասով և կրծքամսով	1 Բաժ	3000
Բանջարեղենային աղցան	1 Բաժ	1600
Կալամատայով և պարմեզանով աղցան	1 Բաժ	2200
Ամառային աղցան	1 Բաժ	1800

Ավելուկով և քամած մածունով աղցան	1 Բաժ	1100
Թաբուլե	1 Բաժ	1300
Թարխունով , հորած պանրով և խաղողով աղցան	1 Բաժ	2200
Թարմ բանջաերղենով և գետնանուշով աղցան	1 Բաժ	1300
Կեսար աղցան	1 Բաժ	2300
Հավի կրծքամսով , քինոայով և թարմ բանջարեղենով աղցան	1 Բաժ	2200
Տավարի մսով , սմբուկով և ընկույզով աղցան	1 Բաժ	2900
Քամած մածունով , վարունգով և ընկույզով աղցան	1 Բաժ	1200

Ապուրներ

Ճաշատեսակներ	Քանակը	Գինը
Ավելուկով ապուր	1 Բաժ	1000
Բորշչ	1 Բաժ	1300
Լոբով ապուր	1 Բաժ	1300
Հավապուր	1 Բաժ	1000
Սպաս	1 Բաժ	1000
Սպաս իշլի քյուֆթայով	1 Բաժ	1400

Տաք ուտեստներ

Ճաշատեսակներ	Քանակը	Գինը
Ամառային տոլմա	1 Բաժ	2900
Արիշտա ղավուրմայով	1 Բաժ	3000
Գառան խաշլամա	1 Բաժ	3900
Գառնի յարախ	1 Բաժ	2500
Թավա կոտլետ պանրով	1 Բաժ	3600
Թավա սուլուգունի	1 Բաժ	1700
Թփով տոլմա	1 Բաժ	2300
Խաշած իշխան կարտոֆիլով	1 Բաժ	3600
Խոզի շոգեխաշուկ փռի մեջ	1 Բաժ	2900
Կաղամբով տոլմա	1 Բաժ	2300
Կարտոֆիլով ճտի տապակա	1 Բաժ	2700
Հավի միս արիշտայով	1 Բաժ	2600
Հարիսա	1 Բաժ	1400
Հավի կոլոլակ բանջարեղենով	1 Բաժ	2100
Հորթի մատեր փռի մեջ բանջարեղենով	1 Բաժ	13000

Ղափամա	1 Բաժ	3200
Ջեռոցի մեջ պատրաստված գառան թիակ հաճարի փլավով	1 Բաժ	11000
Սաղմոն փռի մեջ	1 Բաժ	6500
Տավարի այտեր արիշտայով և բանջարեղենով	1 Բաժ	7700
Տավարի խաշլամա	1 Բաժ	3300
Տժվժիկ	1 Բաժ	1900

Այրվող աղեր

Ճաշատեսակներ	Քանակը	Գինը
Ամբողջական կարմիր իշխան աղի մեջ	1 Բաժ	17000
Բանջարեղենով տավարի ֆիլե աղի մեջ	1 Բաժ	29000
Խոզի չալաղաջ աղի մեջ	1 Բաժ	24000
Հավի միս աղի մեջ	1 Բաժ	15000
Ղափամա մեծ	1 Բաժ	25000

Սեթեր

Ճաշատեսակներ	Քանակը	Գինը
Խորոված տեսականի	1 Բաժ	32000
Քամանչա տեսականի N1	1 Բաժ	35000
Քամանչա տեսականի N2	1 Բաժ	37000
Քամանչա տեսականի N3	1 Բաժ	26000

Խորոված ներ

Ճաշատեսակներ	Քանակը	Գինը
Գառան խորոված	1 Բաժ	3800
Գառան քյաբաբ	1 Բաժ	1600
Խորոված բանջարեղեն	1 Բաժ	1500
Խորոված թառափ 1կգ	1 Բաժ	9500
Խորոված իշխան	1 Բաժ	3700
Խորոված խոզի մատ	1 Բաժ	3600
Խորոված խոզի չալաղաջ	1 Բաժ	3800
Խորոված խոզի փափկամիս	1 Բաժ	3400
Խորոված կարտոֆիլ	1 Բաժ	700
Խորոված սունկ	1 Բաժ	1300
Խորոված տավարի սուկի	1 Բաժ	4500
Խորոված տավարի ֆիլե	1 Բաժ	3900
Հավի խորոված	1 Բաժ	2200

Հավի քյաբաբ	1 Բաժ	1200
Տավարի քյաբաբ	1 Բաժ	1400

Խինկալիներ

Ճաշատեսակներ	Քանակը	Գինը
Խինկալի մսով	1 Հատ	300
Խինկալի պանրով	1 Բաժ	300
Տապակած խինկալի	1 Հատ	350
Տապակած խինկալի պանրով	1 Բաժ	350

Ձվածեղներ

Ճաշատեսակներ	Քանակը	Գինը
Բաստուրմայով ձվածեղ	1 Բաժ	1700
Լոլիկով ձվածեղ	1 Բաժ	1300
Ձվածեղ	1 Բաժ	900
Ղավուրմայով ձվածեղ	1 Բաժ	2300
Պանրով ձվածեղ	1 Բաժ	1300
Սնկով ձվածեղ	1 Բաժ	1300
Տապակած սպանախ ձվով (Սեզոնային)	1 Բաժ	2300
Տապակած բազուկի ճավ ձվով (Սեզոնային)	1 Բաժ	2300
Տապակած մանդակ ձվով (Սեզոնային)	1 Բաժ	2300
Տապակած սիբեխ ձվով (Սեզոնային)	1 Բաժ	2300

Խաչապուրիներ

Ճաշատեսակներ	Քանակը	Գինը
Աջարական խաչապուրի	1 Բաժ	1300
Իմերիթական խաչապուրի	1 Բաժ	2000

Խավարտներ

Ճաշատեսակներ	Քանակը	Գինը
Արիշտա	1 Բաժ	1000
Բրինձ	1 Բաժ	800
Կարագով տապակած կարտոֆիլ	1 Բաժ	1000
Կարտոֆիլի խյուս	1 Բաժ	1000
Հաճարով և սնկով փլավ	1 Բաժ	1300
Տապակած սպանախ (Սեզոնային)	1 Բաժ	2000
Տապակած բազուկի ճավ (Սեզոնային)	1 Բաժ	2000
Տապակած մանդակ (Սեզոնային)	1 Բաժ	2000

Տապակած սիբեխ (Սեզոնային)	1 Բաժ	2000

Դեսերտներ

Ճաշատեսակներ	Քանակը	Գինը
Աղանդների տեսականի մեծ	1 Բաժ	4500
Մրգի տեսականի անանասով և չարազներով	1 Բաժ	6900
Աղանդների տեսականի փոքր	1 Բաժ	2100
Գաթա	1 Բաժ	1500
Թխվածքաբլիթ ընդեղենով	1 Բաժ	1000
Ղադաեֆ	1 Բաժ	1600
Մեղրով տորթ	1 Բաժ	1300
Սեզոնային մրգի տեսականի (Սեզոնային)	1 Բաժ	5500
Մուրաբայի տեասկանի	1 Բաժ	1600
Մրգի տեսականի մեծ	1 Բաժ	8000
Շոկոլադե երշիկ	1 Բաժ	1200
Պաղպաղակ	1 Բաժ	1100
Փախլավա	1 Բաժ	1200
Քաղցր Քամանչա	1 Բաժ	6900

Ալկոհոլային խմիչքներ

Կոնյակ

Տեսակներ	Քանակը	Գինը
Ախթամար 10 տ	1 Բաժ	2300
Դվին 10 տ	1 Բաժ	7000
Ընտիր 7 տ	1 Բաժ	1800
Նաիրի 20 տ	1 Բաժ	6000
Տոնական 15 տ	1 Բաժ	4200

Վիսկի

Տեսակներ	Քանակը	Գինը
Չիվաս ռեգալ 12	1 Բաժ	2500
Չիվաս ռեգալ 18	1 Բաժ	4500
Ջեյմսոն	1 Բաժ	1600
Ջեք դենիելս	1 Բաժ	2100

Տեկիլա

Տեսակներ	Քանակը	Գինը
Պատրոն սիլվեռ	1 Բաժ	4500
Օլմեկա	1 Բաժ	1600

Ռոմ

Տեսակներ	Քանակը	Գինը
Բակարդի	1 Բաժ	1400

Ապերիտիվո

Տեսակներ	Քանակը	Գինը
Ապերոլ	1 Բաժ	1400
Կամպարի	1 Բաժ	1200
Մարտինի բյանկո	1 Բաժ	1000
Ցագերմաստեր	1 Բաժ	1500

Լիկյոռ

Տեսակներ	Քանակը	Գինը
Բեյլիս	1 Բաժ	2000
Դե կայպեր	1 Բաժ	1500
Կահլուա	1 Բաժ	1100

Ջին

Տեսակներ	Քանակը	Գինը
Հենդրիքս	1 Բաժ	3000
Բոմբեյ սափֆիռ	1 Բաժ	1800

Օղի

Տեսակներ	Քանակը	Գինը
Աբսոլյուտ	1 շիշ	9000
Աբրիկոն ծիրան հնեցված	1 շիշ	6000
Աբրիկոն ծիրան	1 շիշ	5500
Արցախ թութ գոլդ	1 շիշ	18500
Արցախ թութ սիլվեռ	1 շիշ	16500
Արցախ ծիրան	1 շիշ	13000
Արցախ հոն	1 շիշ	17500
Բելայա բերոզկա զալատայա	1 շիշ	6000
Բելայա բերոզկա	1 շիշ	5000
Բելուգա	1 շիշ	17000
Բելուգա տրանս ատլանտիկ	1 շիշ	25000
Գրեյգուս	1 շիշ	29000
Զեռնո	1 շիշ	6000
Իջևան թութ	1 շիշ	10000
Իջևան խաղող	1 շիշ	10000

Իջևան ծիրան	1 շիշ	10000
Իջևան հոն	1 շիշ	10500
Կենսատու ծիրան	1 շիշ	16500
Կենսատու մամուխ	1 շիշ	19500
Կենսատու վայրի տանձ	1 շիշ	17000
Կոսկենկոռվա	1 շիշ	8000
Կրեմլի կլասիկ	1 շիշ	14000
Ղարաբաղ թութ	1 շիշ	10500
Ղարաբաղ ծիրան	1 շիշ	8500
Ղարաբաղ հոն	1 շիշ	13000
Մասկովսկայա ասոբա	1 շիշ	6500
Միջնաբերդ թութ	1 շիշ	10000
Միջնաբերդ ծիրան	1 շիշ	9000
Միջնաբերդ հոն	1 շիշ	16500
Նեմիռոֆ լեքս	1 շիշ	10000
Նեմիռոֆ պրեմիում	1 շիշ	5000
Ռուսկի ստադարտ օրիգինալ	1 շիշ	7500
Ս սերեբռոմ գոլդ	1 շիշ	6500
Ս սերեբռոմ սիլվեռ	1 շիշ	6000
Սայմա	1 շիշ	7500
Ստալիչնայա	1 շիշ	7000
Տնական օղի	1 շիշ	6000
Ցառսկի զալատոյ	1 շիշ	7500
Ցառսկի օրիգինալ	1 շիշ	5500
Օհանյան այս	1 շիշ	12000
Օհանյան	1 շիշ	8000
Ֆինլանդիա	1 շիշ	8000
Ֆինսկի	1 շիշ	6000

Գինի և փրփրուն գինի

Կարմիր գինի

Տեսակներ	Քանակը	Գինը
Երևան կարմիր	1 շիշ	6000
Զորահ երազ	1 շիշ	90000
Զորահ	1 շիշ	25000
Կատարո կարմիր	1 շիշ	11000
Կարաս կարմիր	1 շիշ	8500
Կարաս ռեզերվ	1 շիշ	19000

Կուռ կարմիր	1 շիշ	9000
Կուռ ռեզերվ	1 շիշ	19000
Հին արենի կարմիր	1 շիշ	8000
Ոսկենի կարմիր	1 շիշ	8000
Ոսկեվազ կարմիր կիսաքաղցր	1 շիշ	5000
Ոսկեվազ կարմիր չոր	1 շիշ	5000
Ոսկեվազ նռան	1 շիշ	5500
Սարգոն	1 շիշ	8000
Վան առդի կարմիր	1 շիշ	7000
Տակառ կարմիր	1 շիշ	9000
Տակառ ռեզերվ	1 շիշ	15000
Տնական գինի կուժով	1 շիշ	4500

Սպիտակ գինի

Տեսակներ	Քանակը	Գինը
Երևան սպիտակ շիշ	1 շիշ	6000
Կատարո սպիտակ շիշ	1 շիշ	9000
Կարաս սպիտակ շիշ	1 շիշ	7500
Կուռ սպիտակ շիշ	1 շիշ	9000
Հին արենի սպիտակ շիշ	1 շիշ	8000
Ոսկենի սպիտակ շիշ	1 շիշ	8000
Ոսկեվազ սպիտակ կիսաքաղցր շիշ	1 շիշ	5000
Ոսկեվազ սպիտակ չոր շիշ	1 շիշ	5000
Տակառ սպիտակ շիշ	1 շիշ	7000

Վարդագույն գինի

Տեսակներ	Քանակը	Գինը
Կատարո վարդագույն շիշ	1 Բաժ	8000
Ոսկեվազ վարդագույն շիշ	1 Բաժ	5000
Տակառ վարդագույն շիշ	1 Բաժ	7500

Փրփրուն գինի

Տեսակներ	Քանակը	Գինը
Աստի մարտինի պրոսեկո	1 Բաժ	15000
Կարաս փրփրուն	1 Բաժ	8000
Կաֆե դե պաղի	1 Բաժ	12000
Տակառ փրփրուն	1 Բաժ	8000
Քյուշ փրփրուն	1 Բաժ	16000
Քյուշ փրփրուն վարդագույն	1 Բաժ	8000

Գարեջուր

Տեսակներ	Քանակը	Գինը

Գյումրի	1 Բաժ	800
Գյումրի լցնովի 0.33	1 Բաժ	600
Գյումրի լցնովի 0.5	1 Բաժ	800
Դառգետ ծիրան էյլ	1 Բաժ	1200
Դառգետ պիլզներ	1 Բաժ	1200
Կիլիկիա լցնովի 0.33	1 Բաժ	600
Կիլիկիա լցնովի 0.5	1 Բաժ	800
Կորոնա	1 Բաժ	1400
Հեյնեկեն	1 Բաժ	1200

Ալկոհոլային կոկտեյլներ

Տեսակներ	Քանակը	Գինը
Ապեռոլ սպրից	1 Բաժ	4200
Բլադի մերի	1 Բաժ	2200
Լոնգ այլնդ	1 Բաժ	2800
Կոսմոպոլիտան	1 Բաժ	1900
Մարգարիտա	1 Բաժ	3000
Մոհիտո	1 Բաժ	2600

Ոչ ալկոհոլային կոկտեյլներ

Տեսակներ	Քանակը	Գինը
Մոհիտո ոչ ալկոհոլային	1 Բաժ	1600
Շոկոլադ շեյք	1 Բաժ	1500
Պինակոլադա ոչ ալկոհոլային	1 Բաժ	1500
Վանիլա շեյք	1 Բաժ	1500

Զովացուցիչ ըմպելիքներ

Թարմ պատրաստվող լիմոնադներ-գրաֆին

Տեսակներ	Քանակը	Գինը
Լայմ նանա	1 Գրաֆին	3000
Հատապտղային	1 Գրաֆին	3000
Մարակույա	1 Գրաֆին	3000
Ցիտրուսային	1 Գրաֆին	3000

Թարմ պատրաստվող լիմոնադներ-բաժակ

Տեսակներ	Քանակը	Գինը
Լայմ նանա	1 Բաժ	1200
Հատապտղային	1 Բաժ	1500
Մարակույա	1 Բաժ	1500
Ցիտրուսային	1 Բաժ	1500

Զովացուցիչ ըմպելիք

Տեսակներ	Քանակը	Գինը
Բնական հյութ	1 Բաժ	600
Գազով ջուր	1 Բաժ	500
Զովացուցիչ ըմպելիք	1 Բաժ	400
Էներգետիկ ըմպելիք	1 Բաժ	1800
Թան գրափինայով	1 Բաժ	1300
Կոմպոտ	1 Բաժ	1500
Մածնաբրդոշ գրաֆին	1 Բաժ	1700
Ջուր	1 Բաժ	400
Վրացական լիմոնադ	1 Բաժ	700
Տոնիկ	1 Բաժ	900

Թեյ

Տեսակներ	Քանակը	Գինը
Դարչին և մեխակ	1 Բաժ	1000
Էրլ գրեյ	1 Բաժ	700
Թարմ մրգային թեյ	1 Բաժ	1500
Թեյ կանաչ	1 Բաժ	600
Թեյ սև	1 Բաժ	600
Ժասմինով թեյ	1 Բաժ	700
Իմբիրով թեյ	1 Բաժ	1000
Կարկադե	1 Բաժ	700
Մրգային թեյ	1 Բաժ	1000
Նանայով թեյ	1 Բաժ	600
Ուրցով թեյ	1 Բաժ	600
Չիչխանով թեյ	1 Բաժ	1500

Սուրճ

Տեսակներ	Քանակը	Գինը
Ամերիկանո	1 Բաժ	1000
Գլասե	1 Բաժ	1600
Դաբլ էսպրեսո	1 Բաժ	1400
Դեկաֆ ամերիկանո	1 Բաժ	1000
Դեկաֆ էսպրեսո	1 Բաժ	900
Էսպրեսո	1 Բաժ	900
Էսպրեսո մակիատո	1 Բաժ	1100
Լատե մակիատո	1 Բաժ	1300

Կաթ	1 Բաժ	150
Կապուչինո	1 Բաժ	1400
Կապուչինո առոմա	1 Բաժ	1600
Կառամել մակիատո սառը	1 Բաժ	1700
Սև սուրճ	1 Բաժ	500
Տաք շոկոլադ	1 Բաժ	1400
Ֆռապպե	1 Բաժ	1300

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար – գլխավոր քարտուղար՝
Տիգրան Գալստյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<< ԱՐՄԱՏ ԳԱՍՏՐՈ ԳՐՈՒՊ >> ՍՊԸ
Ք. Երևան, Թումանյան Փ. 23 շ. 1-ին տ.
ՀՎՀՀ- 01287516
Ամերիա բանկ ՓԲԸ
Հ/Հ 1570055606590100
Տնօրեն՝ Արեգ Գևորգյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«19» 02 2020թ. կնքված

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79111200/1	Ներկայացուցչական ծախս /4237/	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար – գլխավոր քարտուղար՝
Տիգրան Գալստյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<< ԱՐՄԱՏ ԳԱՍՏՐՈ ԳՐՈՒՊ >> ՍՊԸ
Ք. Երևան, Թումանյան Փ. 23 շ. 1-ին տ.
ՀՎՀՀ-01287516
Ամերիա բանկ ՓԲԸ
Հ/Հ 1570055606590100
Տնօրեն՝ Արեգ Գևորգյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«19» 02 2020թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-20/17 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«19» 02 2020թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-20/17 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն